«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱ	ՆԶՊ
ՀԵՂԻՆԱԿ	ԾԵՐՈՒՆ ԵՂԻԿՅԱՆ
ՄԱՐԶ	ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. Հ1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՇԱՐՔԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 8
ՇԱՐՔԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ 11
ԶԻՆՎՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՔ ԿԱՆԳՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԵՎ ՇԱՐՔՈՒՄ 15
ՇԱՐԱՅԻՆ ԿԵՑՎԱԾՔ 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանակը յուրաքանչյուր պետության հիմնական հենասյուներից է, և բոլոր ժամանակներում այն կարգավորվել է առանձին իրավական նորմերով: Ռազմական գործին առնչվող ցանկացած ոք, գիտի, որ բանակում յուրաքանչյուր հարաբերություն և գործողություն հստակ կանոնակարգված է կանոնագրքերով: Ներկայումս հայոց բանակում գործում է 4 նորմատիվ իրավական ակտ՝ «Ներքին ծառայության կանոնագիրքը», «Կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը», «Կարգապահական կանոնագիրքը» և «Շարային կանոնադրությունը», վերջինս ունի շատ կարևոր դեր և նշանակություն և մարտական պատրաստության բաժիններից է: Ժամանակակից մարտում դժվար է հասնել հաջողության առանց շարային պատրաստության լիարժեք վարժանքների: Դրա շնորհիվ զգալիորեն մեծանում է ստորաբաժանումների զորամիավորումների համատեղ գործողությունների արդյունքում արագ կողմնորոշումն ու իրենց առջև ծառացած խնդիրների լուծումը:

Ուսուցման բոլոր ձևերից միայն շարքն է սովորողների մեջ դաստիարակում հրամանատարի կամքի արագ ու ճշգրիտ կատարումը: Շարքը կոփում է մարդու կամքը, կատարելագործում իր մարմնին տիրապետելու ունակությունը, զարգացնում նրա ուշադրությունը: Շարքում գտնվելու փաստն արդեն իսկ սովորողին վարժեցնում է լինել կարգապահ և կազմակերպված: Շարային պատրաստության յուրաքանչյուր պարապմունք աշակերտների շարային վարժվածության բարձրացման գործում մի նոր աստիճան է:

Ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունը թույլ է տալիս պարապմունքը դարձնել ավելի արդյունավետ և հետաքրքիր: Ուստի պետք է լավ իմանալ ինչ սովորեցնել, այլև ինչպես սովորեցնել, ինչպիսի ուղիներով և միջոցներով հասնել ուսումնական նյութի հաստատուն յուրացմանը:

Շարային պատրաստության յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում զինղեկը աշակերտների վրա ազդում է խոսքով, օրինակով, ցուցադրումով և գործելակերպով:

Աշակերտներն այդ ընթացքում ընկալում են, մտածում և հիշում ուսումնական նյութը, ձեռք բերում գործնական հմտություններ։

Մեթոդները բաղկացած են փոխկապակցված տարրերից, որոնք ընդունված է անվանել ուսումնական հնարքներ։ Եթե նյութի բացատրությունը մեթոդ է, ապա այդ բացատրելու ընթացքում աշակերտներին ուղղված հարցը կլինի մեթոդական հնարք, որը նպաստում է ճանաչողական գործունեության ակտիվացմանը։ Ամբողջ գործողության ցուցադրումը մեթոդ է, իսկ տվյալ գործողության առանձին բաղկացուցիչ մասերի դանդաղեցված ցուցադրումը՝ ուսումնական խնդրի յուրացմանը նպաստող մեթոդական հնարք։ Ուսումնական վարժանքների ժամանակ շատ կարևոր է դասակների և ջոկերի հրամանատարների պարտադիր ներգրավվումը։ Զինղեկը նրանց հետ մշտապես անց է կացնում հրահանգավորումներ։ Առանց այդ օգնականների զինղեկի համար շատ դժվար կլինի արդյունավետ անցկացնել պարապմունքը, քանի որ մեկ մարդու համար մեկ դասաժամի ընթացքում, մեկ դասարանի աշակերտներին գործնականորեն ինչ որ բան սովորեցնելն անհնար է։ Շարային պատրաստությունը աշակերտների դաստիարակության և զինվորական ծառայության նախապատրաստման ողնաշարն է։ Զինվոր դառնալը սկսվում է շարքից։ Այդ է պատճառը, որ նախնական զինվորական պատրաստության բոլոր պարապմունքները և միջոցառումները սկսվում են շարքից։

Շարային պատրաստությունը անց է կացվում գործնական պարապմունքի մեթոդով և ուսումնասիրված հնարքների (գործողությունների) բազմակի կրկնությամբ։ Ընդ որում անհատական ուսուցման հիմքում ընկած է զինղեկի կողմից շարային հնարքների անձնական օրինակելի ցուցադրումը և աշակերտների կողմից դրանց ճշգրիտ կատարումը, որոնք զուգակցվում են մշտապես կրկնվող վարժանքներով։

Նպատակը

Ցուցադրված հնարքը (գործողությունը) պետք է լինի ճշգրիտ, անթերի և շարային կանոնադրությանը խիստ համապատասխան: Այդ պատճառով էլ զինղեկը պետք է մանրակրկիտ նախապատրաստվի դասի (պարապմունքի) ժամանակ հնարքի ցուցադրմանը: Աշակերտները չեն կարող ճիշտ կատարել սխալ կամ վատ ցուցադրված հնարքը և անխուսափելիորեն կկրկնեն նույն սխալները: Յուրաքանչյուր պարապմունք պետք է անցկացվի աշակերտների արդյունքների համեմատության և մրցակցության սկզբունքի վրա հիմնված: Դա անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում ուսումնասիրված նյութի արագ յուրացման համար:

Շարային պատրաստության պարապմունքը կհասնի իր նպատակին այն դեպքում, երբ այն մանրակրկիտ նախապատրաստված է, նյութապես ապահովված է:

Նախնական զինվորական պատրաստության պարապմունքը նպատակահարմար է անցկացնել հետևյալ հերթականությամբ՝

- Անցած պարապմունքների ընթացքում ձեռք բերված գործողությունների և հնարքների ստուգում և վարժում, այսինքն՝ անցած նյութի կրկնություն.
- Նոր շարային հնարքի կամ գործողության ցուցադրում
- Հնարքի (գործողության) ուսուցում. եթե վերջինս բարդ է, ապա այն պետք է ուսուցանել ըստ տարրերի, հետո միաձույլ, դանդաղեցված կարգով՝ կատարման արագությունը հասցնելով կանոնադրական կարգի.
- Անհատական կամ զույգերով (խմբերով) վարժանք.
- Պարապմունքների արդյունքների ամփոփում

Շարային հնարքների ուսուցումը պետք է անցկացնել հետևյալ հերթականությամբ՝

- Հնարքի ծանոթացում

Անվանել հնարքը կամ գործողությունը, բացատրել՝ որտեղ և ինչ նպատակով է այն օգտագործվում.

- Հնարքի ուսուցում

  Տալ հրամանը որով կատարվում է հնարքը (գործողությունը)

- Վարժանք

  Խստորեն՝ ըստ շարային կանոնադրության ցույց տալ թե ինչպես է կատարվում հնարքը ամբողջությամբ, ապա դանդաղ կարգով, ըստ մասերի բացատրել յուրաքանչյուր շարժման կատարման կարգը։

Շարային հնարքի բարդության աստիճանից ելնելով՝ դրա ուսուցումը կարող է անցկացվել՝

- Ամբողջությամբ, եթե բարդ չէ.
- Ըստ մասերի, եթե բարդ է.
- Նախապատրաստական վարժությունների օգնությամբ, եթե հնարքը բարդ է և նրա առանձին մասերը դժվար են ընկալվում.

Շարային հնարքին (գործողությանը) ծանոթանալուց հետո, որպես ամբողջական գործողության կատարման հմտության ձևավորման գործընթաց, ներկայացվում են 3 կապակցված հիմնական փուլեր՝

- Տարրերով և կատարմամբ բարդ հնարքը (գործողությունը) մասնատվում է
- Տարրերը հերթականությամբ միավորվում են ըստ խմբերի, ապա՝ մեկ ամբողջության
- Հնարքի կամ գործողության կատարման մեջ վարժվածության ձեռքբերում

Եվ վերջնարդյունքում հասնել այն բանին, որ հնարքները կատարվեն անսխալ, գեղեցիկ և հստակ։

Նյութը գրելիս օգտվել եմ հետևյալ աղբյուրներից՝

- Շարային պատրաստության մեթոդական ձեռնարկ Երևան 2005թ.
- https://hhpress.am/hanrapetutyun/2023/16607/?fbclid=IwAR0i1NkgjlYHHGNZ2yZs8SbaXpkywwpk3oMPX3v0-hnBTyx-Yla4qOlkIWQ

ՇԱՐՔԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. Շարքի ղեկավարումն իրականացվում է հրամանատարի (պետի) հրամաններով և կարգադրություններով, որոնք տրվում են ձայնով, ազդանշաններով, անձնական օրինակով, ինչպես նաև տեխնիկական ու շարժական միջոցների օգնությամբ: Հրամաններն ու կարգադրությունները շարասյանը կարող են հաղորդվել ստորաբաժանումների հրամանատարների (պետերի) (մեքենաների ավագների) միջոցով:

2. Մեքենաների շարքի ղեկավարումն իրականացվում է ներքին կապի միջոցներով տրվող հրամաններով ու կարգադրություններով:

3. Շարքում ավագ հրամանատարը (վերադաս պետը) գտնվում է այնտեղ, որտեղից ավելի հարմար է հրամաններ տալ: Մյուս հրամանատարները (պետերը) հրաման են տալիս՝ մնալով կանոնադրությամբ կամ ավագ հրամանատարի (վերադաս պետի) կողմից սահմանված տեղերում:

4. Ստորաբաժանումների հրամանատարներին (պետերին) երթային շարքում թույլատրվում է շարքից դուրս գալ միայն հրաման տալու և դրանց կատարումն ստուգելու համար:

5. Շարային հրամանները կարող են լինել նախնական և կատարողական կամ միայն կատարողական:

6. Նախնական հրամանը տրվում է հստակորեն, բարձրաձայն, ձգելով, որպեսզի շարքում կանգնածները հասկանան, թե հրամանատարն ինչ գործողություններ է պահանջում իրենցից: Ցանկացած նախնական հրամանի դեպքում շարքում գտնվող ծառայողներն ընդունում են շարային կեցվածք, շարժման մեջ գտնվելիս՝ անցնում են շարային քայլի, իսկ շարքից դուրս գտնվելիս՝ շրջվում են պետի կողմը և ընդունում շարային կեցվածք:

7. Ստորաբաժանման կամ առանձին ծառայողի ուշադրությունը գրավելու նպատակով նախնական հրաման տալիս, անհրաժեշտության դեպքում, տրվում է ստորաբաժանման

անվանումը կամ ծառայողի կոչումը և ազգանունը: Օրինակ՝ «Զոկատ, կանգ-Ա՛Ռ», « զինվոր Կիրակոսյան, հետ-ԴԱ՛ՐՁ»:

8. Զենքով վարժաձևերի կատարման ժամանակ նախնական հրամանի մեջ անհրաժեշտության դեպքում նշվում է զենքի տեսակը: Օրինակ՝ «Ավտոմատը կրծքին-Ա՛Ռ» և այլն:

9. Կատարողական հրամանը (կանոնադրությունում նշված է գլխատառերով) տրվում է դադարից հետո, բարձրաձայն, հատ-հատ և հստակ: Կատարողական հրամանին հաջորդում է դրա անհապաղ և ճշգրիտ կատարումը:

10. Հրաման տալիս ձայնը պետք է համապատասխանեցվի շարքի լայնությանն ու խորությանը, իսկ զեկույցն արտասանվի հստակորեն՝ առանց ձայնի կտրուկ բարձրացման:

11. Մեքենաների ղեկավարման հրամանները, ազդանշանները կիրառվում են ՀՀ պաշտպանության նախարարի 2001 թվականի ապրիլի 29-ի N 307 հրամանով հաստատված ՀՀ զինված ուժերի շարային կանոնադրությանը (այսուհետ՝ զինված ուժերի շարային կանոնադրություն) համապատասխան: Անհրաժեշտության դեպքում ստորաբաժանման հրամանատարը (պետը) նշանակում է շարքի ղեկավարման լրացուցիչ ազդանշաններ:

12. Բոլոր ստորաբաժանումներին վերաբերող հրամաններն ընդունում և անմիջապես կատարում են ստորաբաժանումների հրամանատարները (պետերը) և մեքենաների հրամանատարները (ավագները):

13. Հրամանն ազդանշանով հաղորդելիս՝ նախ տրվում է «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ազդանշանը, իսկ եթե հրամանը վերաբերում է ստորաբաժանումներից միայն մեկին, ապա ազդանշանի հետ միասին տրվում է նաև այդ ստորաբաժանման անվանումը:

14. Ազդանշանով հրամանն ընդունելուն պատրաստ լինելը դարձյալ նշվում է «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ազդանշանով: Ազդանշանի ընդունումը հաստատվում է՝ այն կրկնելով կամ իր ստորաբաժանմանը համապատասխան ազդանշան տալով:

15. Վարժաձևերի կատարումը չեղյալ համարելու կամ դադարեցնելու համար տրվում է «ԹՈՂՆԵԼ» հրամանը: Այդ հրամանով ընդունվում է նախնական դիրքը:

16. Սովորեցնելիս թույլատրվում է կանոնադրությունում նշված շարային վարժաձևերը կատարել մասերի բաժանելով, ինչպես նաև նախապատրաստական վարժությունների օգնությամբ: Դրա համար տրվում են համապատասխան հրամաններ: Օրինակ՝ «Ավտոմատը կրծքին-Ա՛Ռ, մասերի բաժանելով, կատարի՛ր՝ ՄԵԿ, կատարի՛ր՝ ԵՐԿՈՒ, կատարի՛ր՝ ԵՐԵՔ»: «Աջ-ԴԱ՛ՐՁ, մասերի բաժանելով, կատարի՛ր՝ ՄԵԿ, կատարի՛ր՝ ԵՐԿՈՒ»:

17. Համահավաք անձնախմբեր կազմավորելու համար կատարվում է շարային հաշվարկ՝ ըստ ստորաբաժանումների՝

- ծառայողները կանգնում են միատողան կամ երկտողան և հաշվում են ընդհանուր հերթականությամբ.
- սույն կետի 1-ին ենթակետի պահանջը կատարելուց հետո, ելնելով անձնախմբի թվից, ըստ հերթականության կատարվում է ստորաբաժանումների հաշվարկ, և նշանակվում են այդ ստորաբաժանումների հրամանատարներ:

18. Շքերթներին (զորահանդեսներին) մասնակցելու համար, ինչպես նաև այլ դեպքերում հրամանատարի հրամանով ստորաբաժանման անձնակազմը կարող է ընդհանուր շարասյամբ շարվել երեքական, չորսական և ավելի: Այդ դեպքում, որպես կանոն, շարք են կանգնում ըստ հասակի:

19. Ստորաբաժանումները շարք են կանգնում «ՇԱՐՎԻՐ» հրամանով, դրանից առաջ նշվում է շարք կանգնելու կարգը: Օրինակ՝ «երկտողան-ՇԱՐՎԻ՛Ր»: Այդ հրամանով

ծառայողը պետք է արագորեն շարքում զբաղեցնի իր տեղը, պահպանի սահմանված տարածությունն ու հեռավորությունը, ընդունի շարային կեցվածք:

20. Ստորաբաժանումներին հրաման տալու համար նշվում են այդ ստորաբաժանումների անվանումները:

ՇԱՐՔԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ

ՀՀ ԶՈՒ շարային կանոնադրությունում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) ***շարք՝*** ծառայողների, ստորաբաժանումների՝ կանոնադրությամբ սահմանված դասավորությունը հետիոտն ու մեքենաներով՝ համատեղ գործողությունների համար.

2) ***տողան՝*** շարք, որտեղ ծառայողները տեղավորված են մի գծի վրա, կողք կողքի՝ սահմանված տարածությամբ.

3) ***մեքենաների գիծ՝*** շարք, որտեղ մեքենաները դասավորված են կողք կողքի՝ մի գծի վրա.

4) ***թև՝*** շարքի աջ (ձախ) վերջավորությունը: Շարքի դարձումների դեպքում թևերի անվանումները չեն փոխվում.

5) ***ճակատ՝*** շարքի այն կողմը, որին ծառայողները դարձված են դեմքով (մեքենաները՝ ճակատամասով).

6) ***շարքի թիկունքային կողմ՝*** ճակատի հակադիր կողմը.

7) ***տարածություն*** (ինտերվալ)՝ ծառայողների (մեքենաների), ստորաբաժանումների միջև ճակատային գծով եղած տարածությունը.

8) ***հեռավորություն*** (դիստանցիա)՝ ծառայողների (մեքենաների), ստորաբաժանումների միջև դեպի խորքն ընկած հեռավորաթյունը.

9) ***Շարքի լայնություն՝*** թևերի միջև եղած հեռավորությունը.

10) ***Շարքի խորություն՝*** առաջին տողանի (առաջին շարքում կանգնած ծառայողի) և վերջին տողանի (վերջին շարքում կանգնած ծառայողի) միջև եղած հեռավորությունը, իսկ մեքենաներով գործելու դեպքում՝ մեքենաների առաջին գծի (առջևում կանգնած մեքենայի) և մեքենաների վերջին գծի (հետևում կանգնած մեքենայի) միջև եղած հեռավորությունը.

11) ***Միատողան շարք՝*** շարքի այն տեսակը, որտեղ ծառայողները տեղավորված են սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով.

12) ***Երկտողան շարք՝*** շարքի այն տեսակը, որտեղ տողաններից մեկում կանգնած ծառայողները մեկ քայլ հեռավորությամբ դասավորված են մյուս տողանի ծառայողների թիկունքում՝ առաջ մեկնած ձեռքի ափը դնելով դիմացը կանգնած ծառայողի ուսին և նայելով առջևի կանգնածի ծոծրակին: Տողանները կոչվում են *առաջին և երկրորդ*: Դարձումների դեպքում տողանների անվանումները չեն փոխվում.

13) ***կարգ***՝ երկտողան շարքում կանգնած երկու ծառայողներ՝ մեկը մյուսի թիկունքում: Եթե առաջին տողանի ծառայողի թիկունքում (երկրորդ տողանում) ծառայող չկա, ապա այդպիսի կարգը կոչվում է ոչ լրիվ: Երկտողան շարքի հետդարձի ժամանակ ոչ լրիվ կարգի ծառայողն անցնում է առաջին տողան.

14) ***միատողան ու երկտողան*** շարքերը կարող են լինել խիտ և նոսր: Խիտ շարքում ծառայողները տողաններում տեղավորված են ճակատով, կողք կողքի՝ մեկը մյուսի արմունկից ձեռքի ափի լայնության վրա: Նոսր շարքում ծառայողները տողաններում տեղավորված են ճակատով՝ մեկը մյուսից մեկ քայլ կամ հրամանատարի (պետի) նշած հեռավորության վրա.

15) ***շարասյուն***՝ շարք, որտեղ ծառայողները տեղավորված են մեկը մյուսի թիկունքում՝ ծոծրակի ուղղությամբ, իսկ ստորաբաժանումները (մեքենաները)՝ իրար հետև՝ կանոնադրությամբ կամ հրամանատարի (պետի) կողմից սահմանված հեռավորության վրա: Շարասյունները կարող են լինել միաշարասյուն, երկշարասյուն, եռաշարասյուն և ավելի: Շարասյունները կիրառվում են ստորաբաժանումները երթային կամ ծավալուն շարքով շարելու համար.

16) ***ծավալուն շարք***՝ որտեղ ստորաբաժանումները շարված են ճակատով մի գծի վրա՝ միատողան կամ երկտողան շարքով (մեքենաների գծով), կամ շարասյուների գծով՝ կանոնադրությամբ կամ հրամանատարի (պետի) կողմից սահմանված հեռավորության վրա: Ծավալուն շարքը կիրառվում է ստուգումների, հաշվարկների, ստուգատեսների, շքերթների (զորահանդեսների) ժամանակ և այլ անհրաժեշտ դեպքերում.

17) ***երթային շարք***՝ որտեղ ստորաբաժանումը շարված է շարասյունով կամ ստորաբաժանումները՝ շարասյուներով, մեկը մյուսի հետևում՝ կանոնադրությամբ կամ հրամանատարի (պետի) կողմից սահմանված հեռավորության վրա: Երթային շարքը կիրառվում է ստորաբաժանումների հանդիսավոր երթի, երգով անցնելու, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում.

18) ***ուղղապահ***՝ ծառայող (ստորաբաժանում, մեքենա), որը շարժվում է շարասյան առջևից՝ նշված ուղղությամբ: Ուղղապահի հետևից իրենց շարժումը համաձայնեցնում են մյուս ծառայողները (ստորաբաժանումները, մեքենաները).

19) ***վերջապահ***՝ ծառայող (ստորաբաժանում, մեքենա), որը շարժվում է շարասյան վերջում:

ԶԻՆՎՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՔ ԿԱՆԳՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԵՎ ՇԱՐՔՈՒՄ

Ծառայողը պարտավոր է՝

- ստուգել իրեն ամրացված պաշտպանության անհատական միջոցները, զենքը, համազգեստը և հանդերձանքը.
- ունենալ կոկիկ մազեր և արտաքին տեսք.
- խնամքով ուղղել համազգեստը, ճիշտ հագնել և հարմարեցնել հանդերձանքը, օգնել ընկերոջը վերացնելու նկատված թերությունները.
- գիտենալ իր տեղը շարքում, կարողանալ արագորեն, առանց իրարանցման զբաղեցնել այն. շարժման ընթացքում պահպանել հավասարությունը, սահմանված տարածությունը և հեռավորությունը, անվտանգության պահանջները, առանց թույլտվության դուրս չգալ շարքից (մեքենայից).
- չծխել, շարքում չխոսել առանց թույլտվության, ուշադիր լինել հրամանատարի (պետի) հրամանների նկատմամբ, դրանք կատարել արագ և ճշգրիտ՝ առանց մյուսներին խանգարելու.
- հրամանները հաղորդել առանց աղավաղման, բարձրաձայն և հստակորեն:

ՇԱՐԱՅԻՆ ԿԵՑՎԱԾՔ

Շարային կեցվածքի ընդունումը զինվորական ծառայության այբուբենն է: Այն զինծառայողին ուղեկցում է զինվորական ծառայության զորակոչվելու առաջին օրվանից մինչև

զորացրումը: Շարային կեցվածքի ընդունումը զինվորի մեջ դաստիարակում է կուռ կարգապահություն, ուշադրություն, կատարողականություն և այլ հատկանիշներ: Շարային կեցվածք ընդունվում է «ԶԳԱ՛ՍՏ» կամ «ՇԱՐՎԻՐ» հրամաններով: Լսելով այդ հրամանները՝ զինծառայողն առանց լարվելու կանգնում է ուղիղ՝ ոտնաթաթերը բացելով թաթի լայնությամբ և հավասարեցնելով ճակատային գծի հետ: Ծնկները պետք է լինեն ուղիղ, գլուխը՝ բարձր պահած, կուրծքը և մարմինը՝ մի փոքր առաջ տված: Ձեռքերը պետք է ցած իջեցնել ազդրերի կողքով այնպես, որ դաստակների ափերը՝ կիսախուփ ծալված մատներով, հպվեն ազդրերին: Կանոնադրությամբ սահմանված են շարային կեցվածք ընդունելու նաև այլ դեպքեր՝ Հայաստանի Հանրապետության պետական օրհներգի, զինվորական ողջույնի կատարման ժամանակ, զեկույց տալիս, կարգադրություններ անելիս և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դասի որակը պայմանավորվում է զինղեկի անձով և նրա կողմից իր պարտականությունների ստեղծագործական մոտեցմամբ: Շարային պատրաստության արդյունավետությունը բարձրանում է, եթե տեսական գիտելիքներն ամրապնդվում են գործնական պարապմունքներով: Շարային գործողությունները զորամիավորումների կազմում խթանում են նպատակասլացությունը, համբերությունը, հաստատակամությունը: Ծառայության ընթացքում զինվորը ժամանակի մեծ մասն անց է կացնում շարքում: Այս պատճառով դպրոցում ուսուցանվող բանակային կյանքի իրողությունը չպետք է եզրափակվի այս կամ այն վարժաձևի կատարման անհրաժեշտության միայն տեսական դատողություններով: Պետք է կարողանալ յուրաքանչյուր աշակերտի համար գտնել անհատական մոտեցում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ ԶՈՒ շարային կանոնադրություն
- Շարային պատրաստության մեթոդական ձեռնարկ
- ՆԶՊ դասագրքեր